ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

<< 26 >> << Մայիսի >> 2019թ. N ՄՊ/147-2019

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 96-րդ և 98-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2018 թվականի դեկտեմբերի 21-ի N364-Ա հրամանը.

որոշում եմ՝

1. Հաստատել 2019 թվականին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքներում իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության բնագավառը, ժամանակահատվածը, իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնող աշխատանքային խմբերի կազմերը՝ համաձայն NN 1-2 հավելվածների:
2. Իրավական և մասնագիտական հսկողության իրականացման գործընթացում ղեկավարվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2016 թվականի հունվարի 25-ի N1/32.1/727-16 հանձնարարականով ներկայացված՝ համապատասխան ոլորտի պետական լիազորված մարմնի և իրավական հսկողության բարձրագույն մարմնի համատեղ հրամաններով հաստատված Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից իրականացվող իրավական և մասնագիտական հսկողության հարցաշարով:
3. Անհրաժեշտության դեպքում իրավական և մասնագիտական աշխատանքային խմբում ներգրավել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումների այլ մասնագետների:
4. Մասնագիտական հսկողություն իրականացնելիս անհրաժեշտություն առաջանալու դեպքում աշխատանքային խմբում ներգրավել նաև մասնագիտական որակավորում ունեցող այլ անձանց (համաձայնությամբ):
5. Աշխատանքային խմբերի ղեկավարներին՝ յուրաքանչյուր համայնքում իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնելուց հետո 3 աշխատանքային օրվա

0901 ք. Արմավիր, Արովյան -71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս 010/28-06-46, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am

ընթացքում, իրավական հսկողության բարձրագույն մարմնի կողմից հաստատված օրինակելի ձևին համապատասխան կազմել արձանագրություն:

6. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի տեղակալ Կարեն Գրիգորյանին:
7. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի տեղակալ Կարեն Գրիգորյանին՝ երկրորդ եռամսյակին հաջորդող ամսվա առաջին տասնօրյակում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարություն ներկայացնել տվյալ եռամսյակում իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքում կազմված արձանագրությունները:
8. Հայաստանի Հարապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետին (Վ. Մկրտչյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
9. Սույն որոշումն ուժի մեջ է մտում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ **Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

4/26/2019

X

VERIFIED OCSP 4/26/2019 14:32:39 GMT+4

Signed by: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230

0901 ք. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս 010/28-06-46, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am

Հավելված N1
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
2019 թվականի ապրիլի 26-ի
ՄՊ-47-2019 որոշման

2019 թվականի երկրորդ եռամսյակի Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքներում իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության բնագավառը, իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը

հ/հ	*Համայնքի անվանում*	*Իրականացվելիք վարչական հսկողության ժամանակահատվածը*	*Իրականացվելիք վարչական հսկողության բնագավառ*	*Վարչական հսկողություն իրականացնող պաշտոնատար անձիք*	
				Զբաղեցրած պաշտոն (աշխատանքային խմբի ղեկավար, անդամ)	*Անուն, ազգանուն*
1.	Նորավան համայնք	5 աշխատանքային օր		Աշխատանքային խմբի ղեկավար՝	
2.	Այգեշատ (Արմավիր) համայնք	5 աշխատանքային օր	1. Տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների բնագավառ	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ	Վ. Մկրտչյան
			2. Քաղաքաշինության բնագավառ	Աշխատանքային խմբի անդամներ՝	
3.	Բամբակաշատ համայնք	5 աշխատանքային օր	3. Հողօգտագործման բնագավառ	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ	Ս. Թովմասյան

4.	Խորոնք համայնք	5 աշխատանքային օր		Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության գլխավոր մասնագետ	Ս. Սարգսյան
5.	Հայկաշեն համայնք	5 աշխատանքային օր		Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետի պաշտոնակատար	Ա. Սարգսյան
6.	Նորակերտ համայնք	10 աշխատանքային օր		Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՏԻ և համայնքային ծառայության հարցերի բաժնի գլխավոր մասնագետ:	Ա. Ավչյան

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ **Վ. ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ**

26.04.2019

X

VERIFIED OCSP 26.04.2019 14:23:34 GMT+4

Подписано: VARDAZARYAN VARDAN 1704780217

Հավելված N2
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
2019 թվականի ապրիլի 26-ի
ՄՊ/N 47 - 2019 որոշման

2019 թվականի երկրորդ եռամսյակի Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքներում իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության բնագավառը, իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը

հ/հ	*Համայնքի անվանում*	*Իրականացվելիք վարչական հսկողության ժամանակահատվածը*	*Իրականացվելիք վարչական հսկողության բնագավառ*	*Վարչական հսկողություն իրականացնող պաշտոնատար անձիք*	
				Զբաղեցրած պաշտոն (աշխատանքային խմբի ղեկավար, անդամ)	*Անուն, ազգանուն*
1.	Ծիածան համայնք	5 աշխատանքային օր	1. Տեղական ինքնակառավարման մարմինների սեփական և պետության պատվիրակված լիազորությունների բնագավառ 2. Քաղաքաշինության բնագավառ 3. Հողօգտագործման բնագավառ	Աշխատանքային խմբի ղեկավար՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՏԻ և համայնքային ծառայության հարցերի բաժնի պետ.	Գ. Հովհաննիսյան
2.	Նոր-Կեսարիա համայնք	5 աշխատանքային օր		Աշխատանքային խմբի անդամներ՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի իրավաբանական բաժնի բաժնի պետի պաշտոնակատար.	Լ. Հարությունյան
3.	Երվանդաշատ համայնք	5 աշխատանքային օր		Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ.	Ռ. Երվանդյան

4.	Փշատավան համայնք	5 աշխատանքային օր		Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության պետ.	Ա. Դարբինյան
5.	Հայկավան համայնք	5 աշխատանքային օր		Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ	Ա. Դանիելյան

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ **Վ. ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ**

26.04.2019

X

VERIFIED OCSP 26.04.2019 14:24:37 GMT+4

Подписано: VARDAZARYAN VARDAN 1704780217